

կութեան շեղել հնաւանդ և, ինչպէս պրակտիկան ցոյց է տալիս, նաև հնացած օրէնքներինց: Այդպիսի դէպքերում ժողովրդի զգացմունքը ամենաճիշդ ուղեցոյցն է օրէնսդրութեան. եթէ ժողովրդական զգացմունքը ոչինչ չի գտնում այդպիսի պատկերի դէմ, իսկ միև կողմից գիտութիւնը և պատմութիւնը ոչ մի դրական ապացոյցներ չեն բերում նոցա ֆնասակարութեան մասին, — ամենախելացին ժողովրդական զգացմունքին հետեւին է:

Լ Ո Ւ Ս Ի Ն Ի:

† ՌՍՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Ռուսահայոց մտաւոր վերածնութեան հիմնադրոններից և աշխատակիցներից մէկն էլ Նընջեց իւր ընկերների հետ—Խ. Աբովյանի, Ս. Նազարեանի, Մ. Նալբանդեանի, Ռաֆիի հետ. լաւտեսնականութիւն չեց և Գամառ-Քաթիպան, որ 40 տարի ձեռքից չը ձգեց գրիչն ու քնարը, կրթութեւ և հրահանգելու իւր ազգը, որին սիրում էր բուռն սիրով, իւր հոգու բոլոր ուժով:

Պատկանելով աչն ընդունակ և հանճարաւոր Պատկանեան գերդաստանին, որ արդէն տւել էր ազգին Սերովբէ վարժապետին ծերունի Գարրիէլ քահանային, պրոֆէսոր Գերովբէ Պատկանեանին՝ Ռաֆիպէլ Պատկանեանն էլ փոքր հասակից ինքն իրան նւիրեց ազգի կրթութեան դործին և դեռ ուսանող ժամանակ, 50-ական թւականների սկզբին՝ հնչեցրեց իւր քնարը, և հէնց այդ կանուխ ժամանակից նա որոշեց աչն շաւիղը, որով պիտի ընթանար իւր ամբողջ կեանքում: Իւր նախընծայ մի երգում «հեռացել եմ իմ մալրենի աշխարհից» նա ասում է՝

Այուպէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէ դար սընար ամուր անկործան:
Սա երգիցի երգ ոլորուն ու անուշ,
Իմ քընարի ձայնն էր մեղմիկ ու քընքուշ:
Մթթէ աչնքան անգութ կը լինի Լետա գետ,
Որ անունըս անգամ կանէ նա անհետո:

Այս քանի մի տողը բաւական են բնորոշելու Ռ. Պատկանեանի կորովի կամքն և հաստատամտութիւնը. դեռ հազիւ 20 տարեկան՝ նա միտքը դնում է «ոլորուն և անուշ» երգերով կանգնել իրան անկործան արձան, որ դարէ ի դար մնար, որպէսզի իւր անունը և լիշատակը չը կորչեն: Այս նպատակը դրեց իրան պատանի Ռաֆիպէլը և 40 տարի անընդհատ, աւանց

չեղևելու հետեց նորան, Նորա քնարի եղբրերգական և մելամաղձոտ ձայնը հետզհետէ համարձակեցաւ և դարձաւ պատգամախօս փող, որ հնչում էր բոլոր հաղարնակ աշխարհներում և որտղնդոտ սթափեցնում էր նիրհող ժողովուրդը: Նորա բնածին տաղանդն հետզհետէ դարգացաւ և եզակին դարձաւ, իբրև հալ բանաստեղծի, և արօր, նախելով Ռ. Պատկանեանի 10-ամեակ գրական գործունէութեան վրա՛լ՝ համարձակ կարող ենք ասել, թէ նա մեծ բանաստեղծ էր, և առաջին բանաստեղծը Ռուսահայոցս մէջ:

Ռ. Պատկանեանի տաղանդն եզական է, ասացի, Գեղարեւտադէտի ամենամեծ զաղտնիքը, ամենաբարձր կատարելութիւնը միշտ երևում է նորա գրած քների մէջ, որչափ էլ սոքա մանր լինէին: Նա գիտէ զգացմունքին տալ լարմար բառեր, ալնպէս որ բառերը ճիշտ թարգման լինէին իւր զգացման և ալն չափով ազդէին ընթերցողի վերայ, որ չափով որ զգացել էր ինքք հեղինակը գրելիս: Աւելորդաբանութիւն, չափազանցութիւն գոչների մէջ՝ դուք երբէք չէք նկատի նորա գրած քներում: Նոքա բնական են, պարզ, թեթև, ալնքան բնական, որ դուք կարծում էք տեսնել և շօշափել նկարագրածը, ալնքան պարզ, որ ձեր երեակալութեան մէջ մարմնանում է նկարագրած ողին, միտքը: Վառվառն երեակալութիւն, ճիշտ ըմբռնողութիւն, խոր տպաւորութիւն և լեզւի հարուստ պաշար, որից նա հեղինակաբար ասում էր բոլոր պէտք եղած նիւթերը՝ իւր գեղարեւտական շէնքը շինելու համար,—ահա Գ. Քաթիպալի հողու լատկանիչները: Բարձրագոյն ուսումնալսակրում, ուր շատ ընդարձակ է մտածելու և տեսողութեան հորիզոնը՝ նա իրան իւրացրեց լուսամիտ գաղափարներ, առաջ հակեցակէտ ստեղծեց և վերադառնալով իւր ազգակիցներին մօտ՝ ալն լուսամիտ բարձր գաղափարներն սկսեց արծարծել ժողովրդի մէջ երբեմն գողտրիկ երգերով, երբեմն սուր երգիծաբանութիւններով: Շնորհիւ բարձր կրթութեան՝ նա շատ լաւ ըմբռնեց ժամանակի ողին, աչքի պէտքերն ու իղձերը, նման մի մարդու որ կանգնած լինելով բարձր լեռան գագաթին՝ արդէն տեսնում է հեռու արեւլքում արշալոյսը բացելիս: մինչդեռ ձորում բնակող ամբողջի համար երկնքում մի՛ալն թանձր խաւար է տիրում:

Արալխի բարձրութիւնից, ճիշտ գուշակելով սպագան՝ նա հնչեցնում էր իւր լարերը, ոգևորում լսողներին, զարթնեցնում թմբածներին, չղս ազդում լուսահատներին, կեանք ներշնչում մեռածներին:

Սպառազինւած գիտութեամբ, ներշնչւած բուռն հալեհնասիրութեամբ, առատ օժտած աստուածային հրով՝ Գամառ Քաթիպան քառասուն տարի ազլի մտաւոր և բարոյական անդաստանի անխոնջ մշակը դարձաւ իբրև շատ նուրբ ծանրաչափ՝ նա նախազգում էր ժողովրդի ցաւերն ու պէտքերը, և նոցա դարման հալթալթում իւր ազդու գողտրիկ

երգերով: Գեռ ան ժամանակ, երբ մեզանից շատերը դեռ չէին ծնել, երբ խոր խաւար էր տիրում հալոց մտաւոր և բարոյական հորիզոնի վրայ, երբ նախընթաց երկար միութեան դարերը, արշաւանքները, բռնութիւնները ճնշել էին հալի ողին, արմատացրել էին ստրկութիւն կեղծաւորութիւն, արծաթասիրութիւն, երբ մեծ էր համարւում արտաքին ճոխութիւն ունեցողը, երբ սարսափելի հալածանքների էր ենթարկւում ազատ մտածող և ազատ խօսող անփորձ պատանին, երբ եղած դրութեան դէմ ձայն բարձրացնողը վտանգաւոր սրբապիղծ էր համարւում—չստանական թակահոնների սկզբին, մտքի գերութեան տարիները—Ռափ. Պատկանեան առաջին անգամ հնչեցրեց իւր սողորուն և անուշ երգերը: Երանք իրանց թարմ մտքերով, կենդանի նկարագրութեամբ, անուշ, հասկանալի, հնչուն բառերով գրաւեցին ու ղիւթեցին ամենին. ինչպէս վառւած ծարաւի գետինը ծծում է անլազաբար երկնատեղ կաթիլները՝ նոյն ծարաւով կլանում էր ան ժամանակի թարմ սերունդը Գամ. Քաթիպալի սիրուն տողերը, տողերի հետ մտքերը. աչդ մտքերը սեփականում էր իրան—ան աստիճան նոքա դիւրամարս, համոզիչ էին—և աչդ նոր սերունդը նոր մտքերով էր տողորւում, լուսամիտ, աղատական, ազնիւ, գեղեցիկ մտքերով:

Նրկու գլխաւոր մասերից է բաղկանում Գամ. Քաթիպալի բանաստեղծական գործունէութիւնը. քանդող և ստեղծող Առաջին մասում նա հարւածում է աղբի պակասութիւնները, տապալում է դարաւոր նախապաշարունակներն և սխալ հպեացքները. և այս մասում որչափ զարմանալի է նրա տաղանդը, ճիշտ, մարդավայել գաղափարն ան խաւար ժամանակում, որից նա ամբողջ դիւտով բարձր էր կանգնած՝ դուցէ աւելի զարմանալի լինի նրա համարձակութիւնը, անաչառութիւնը, վստահութիւնը. Նա անխնայ, անվախ հարւածում է կեղծ ազգասիրութիւնը, կեղծ կրօնաւորութիւնը, կեղծ, արտաքուստ կրթութիւնը, շուպ և անպիտան աղաւակն կեանքը, բռնի ամուսնութիւնը, հեռն և նախանձը, ազատութիւն ու արծաթասիրութիւնը, ազգատեցութիւն և անտարբերութիւնը դէպի աղբի պիտոյքները: Այս պակասութիւնների դէմ, որոնք տիրապետում էին հալոց մտքերին ու սրտերին ան ժամանակ՝ նա ուղղեց իւր հօր երգերը («Ո՞վ է հալը»), «Յուպը ձեռին», «Տեղը եկաւ», «Շուշան շուտով», «Շլինքը արեաւո», «Լուսադէմին աղբիւրի մօտ», «Դե-Մրուս», «Մեզնից շատ առաջ», «Ի՞նչ ես ջարդում», «Դեռ չի գրած առաջ դու լաւ միտք արտ», «Ամիրալ», «Հալերուս թուքը», «Հալերուս բաղձանքը» և այլն): Հարւածելով այս պակասութիւնները, որոնք բոլոր էին դրել մեծամեծների, աղաների և հօրների մէջ՝ նա հէնց դորանով ցոյց էր տալիս և ուղիղ ճանապարհը դէպի առաքինին և վազելուչը: Մեղ ղիւրին է թել նորա գրածները, նրա հարւածած պակասութիւնները. բաց սրչափ դժւար էր ան խաւար ժամանակ իրագործել այդ ամենը. տգիտութեան, եսամուլութեան, աղաւու-

թեան դոռող ամբարտակի դէմ կուսել զըջով. չը վախենալ հալածանքից, չընկրկել խաւարի անհուն ուժի առաջ, «եթէ մի գիւղում բոլորը կոյր են՝ դու էլ յո աչքերը հանիր» ստում է ժողովրդական առածը. հալ ժողովրդի գաւանանքն է եղել՝ համակերպել շրջապատող հանդամանքներին. և հասարակ մահկանացուն համակերպում էր և համակերպում է հանգամանքներին: Միայն արծէթուիչ մտքերն են, ազատ ոգիները, որ խորտակում են այդ հանդամանքների կաշկանդող շղթան և դուրս են թռչում և աշխատում են իրանց լեռների քաշել հանել ուրիշներին ևս այդ կուրուքեան աշխարհից: Այսպիսի սակաւաթիւ ընտրեալներին էր պատկանում և մեր հանդուցեալ մեծ բանաստեղծը՝ Նա ոչ միայն իւր աչքերը կամաւ չը կուրացրեց, խոճնկ չը ծխեց հորոնների առաջ, չը քաջալերեց ճոցա պակասութիւնները՝ այլ աշխատեց ուրիշ կոյրերի աչքերն ևս ըսնալ, երեսովը տալ կեղծաւորների և արատաւորների պակասութիւնները:

Նորա քնարի ստեղծագործական մասը գրեթէ ամբողջապէս նւիրած է հալ ազգայնութեան, աղղի ինքնաճանաչութիւնը զարթեցնելու, լոյսեր արծարծելու, ոգևորելու:

Այս մասում Գ. Քաթիլպալի տաղանդի բոլոր մեծութիւնը արտափայլում է և հասնում վսեմ կատարելութեան: Բոլոր նրա մասուր բղձնակութիւններին ալտեղ խառնուել է և բուռն հայրենասիրութիւն, որ դորանում է նորա ամեն մի տողից, որ գրաւում և գերում է կարդացողին, երբեմն արտասուք հոսեցնելով նորա աչքերից, երբեմն աւուժի արիւթթիւն ներշնչելով, բայց միշտ սիրեցնելով հայրենիքը, բոլոր նորա վշտերով և ցաւերով: Այս մասում նորա զուլ-գործոցը «Մայր Արաքսի»-ն համարում է մի հրաշակերտ առհասարակ բանաստեղծական գրականութեան մէջ:

Բ. Պատկանեան բացի բանաստեղծութիւնից ունեցել է և ուրիշ տեսակ գրականական գործունէութիւն՝ վիպասանական, երգիծարանական և Սիւլվիկ կեղծանուաներով: Եթէ վիպասանական գրած քները (Նս նշանած էի, Չախու և այլն) արտափայլում են նույն հանճարը, ժողովրդի կեանքի ճուտ գիտութիւն և կենդանի ճիշտ պատկերը՝ սակայն չենք կարող նույն ասել և երգիծարանական գրած քների մասին, որոնք զրպարտագրութեան պամֆլետի աւելի նմանութիւն ունեն, և որոնք հեղինակից առաջ մեռան:

Մենք սակայն չարդում և պաշտում ենք Բ. Պատկանեանի լիշատակը իրրև ազգային մեծ բանաստեղծի, որ մեր բարոյական կրթութեան, ինքնաճանաչութեան, ինչպէս և գրականութեան վերալ անջնջելի և մեծ ազդեցութիւն ունեցաւ Չախազանցութիւն արած չեմ լինի, եթէ ասեմ, թէ ալժմեան գործող բոլոր սերունդը Գամառ Քաթիլպալի աշակերտն է եղել անելի կամ նւաղ չարով: Գեռ. փոքր հասակներումս, ուսումնարանի նստարանի վերալ, մենք զմալլմամբ սովորել ենք նորա երգերը և ոգևորութեամբ կրկնել. ճոքա ազնւացրել են մեր սրտերը, ոգևորել են ազգային

սիրով, կրթել են մեր զգացմունքները: Այդ բարի սերմերն ընկնելով մանկական զգալուն սրտի փափուկ հողի վերայ՝ աճել ու ծաղկել են և սրտաբերել, արդիւնատուրել. և եթէ մենք ճիշտ չափեր ունենալինք որոշելու քանակութիւնը այդ ազդեցութեան, որ Գ. Քաթ. ունեցել է մեր վերայ՝ անշուշտ բաւական մեծ պէտք է լինէր նա ամեն մէկիս մէջ, և անհուն կը լինէր՝ բոլոր հալ սերունդին մէջ, որ սփռած է աշխարհ ի շրտ կողմերը:

Սակայն բարոյական ուժն է, որ անասնական շրջանից մեզ մարդ է դարձնում, ազգային զգացմունքն է, որ մարդկային ցեղի խմբերը կապում է միմեանց հետ իբրև համազգայինցներ, իբրև ազգային միութիւն և Գ. Ք.-ի ազդեցութիւնը մեզ բարոյապէս կրթելում, մեզ ազգային ինքնաճանաչութիւն պարզեցնում՝ շատ մեծ է: Նթէ, մի բանաստեղծի խօսքով՝ մարդը «թագաւոր է և ստրուկ, որդն է և Աստած»՝ եթէ մտաւոր և բարոյական կրթութիւնը մեզ ստրուկի և որդնի դրութիւնից մեծացնում և բարձրացնում են մինչև թագաւորականութիւն և աստածամասնութիւն՝ այս անգնահատելի փոխակերպութիւնը մեր սերնդի մէջ մասամբ Գ. Քաթի պակի գործն և արդիւնքն է: Նա մի մարդ չը ստեղծեց, նա ամբողջ մի սերունդ կրթեց, ազնւացրեց, և դեռ քանի սերունդներ նորան պէտք է աշակերտեն անմիջապէս և արժմեան սերունդի միջնորդութեամբ:

Այն հուրը, որ նա վառեց իւր հալքենասիրական երգերով՝ արծարծեց ամեն կողմ, հրդեհեց բոլոր հալ սրտերը. և ո՞վ կարող է ասել, թէ նա կը հանգչի առանց հետևանքի...

Գրականութեան մէջ ևս Գ. Ք.-ին է վերաբերում արժմեան գրական լեզուի անդրանիկ մշակ և հիմնադիրներից մէկը լինելու պատիւը: Գեռ չէր սկսուել «Հիւսիսափայլը»՝ որ դուրս եկան Գ. Ք.-ի բանաստեղծութիւնները, որոնք իրանց սահուն գոգոտրիկ լեզուով սիրելի դարձան ընթերցողին: Աշխարհաբարը այն ժամանակ դեռ տատանող վիճակի մէջ էր գտնուում, ինչպէս հազիւ ոտք ելած մի երեխայ: Գրաբարեանների սուար բանակը պատրաստ էր չարձակելու և խանձարուրին մէջ խեղդելու այդ նորածին բալց վտանգաւոր ախտեանին: Եւ ահա Գ. Ք. իւր տաղանդաւոր և դեղեցիկ բանաստեղծութիւններով անագին զարկ է տալիս այդ լեզու լաւաջազիմութեան և ոչ թէ խօսքով, այլ գործով չաղթանակ է տանում: Այդ երգերը անուշետես սիրելի են դառնում բոլոր հասակի հայերին, փոքրերից սկսած մինչև երիտասարդներն ու ծերերը: Նոցա օրինակով ուրիշ շատերն սկսում են գրել, հետեւելով իրանց մեծ ուսուցչի շաւղին. այս 40 տարւոց ընթացքում երեքսոր և երեցոդ բանաստեղծներից և ոչ մէկը զերծ չէ մնացել Գ. Ք.-ի բարեբար և հրահանգիչ ազդեցութիւնից: Նա ուսուսանալոց քնարական լեզուն ստեղծեց և ազգային բանաստեղծութեան հիմնադիրն եղաւ:

Այս բազմատեսակ անգնահատելի ծառայութիւնները, որ Ռ. Պատ-

կանեան մատուցել է ազգին և գրականութեան՝ անմահացնում են նորա անունը և նրան դատում ընտիր հակազուլանների Պանթէոնի մէջ, Ազն արձանը, որ եռանդուն պատանին կուղէր կանգնեցնել որպէս զի իւր անունն և լիշատակը աշխարհից չը ջնջւին՝ այո՛, նա կանգնեց, արպիտի արձան, որ, հռովմայեցի երևելի բանաստեղծի խօսքերը կրկնելով՝ սպղնձից աւելի մնալուն է և աւելի բարձր քան բուրգերի երկնադիտակ հասակը. արձան, որ չին կարող կործանել ոչ մաշող անձրևը և ոչ խտտաշունչ հողմերը, ոչ անթիւ անհամար տարիների շարքը և ոչ ժամանակի ընթացքը»:

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆ